

15.06.2021թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 023426/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 15.06.2021թ. թիվ 23426 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 23426 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐՉԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր Դավիթ Բաղդյանը (ՀՎՀՀ՝ 26547723, հասցե՝ ՀՀ ք. Երևան Նանսեն 5/3 29) 2021թ. մարտ ամսվա եկամտային հարկի հաշվարկը ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել հարկային մարմին, ինչի համար վարչական պատասխանատվություն է նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Դավիթ Բաղդյանը 2021 թվականի մարտ ամսվա եկամտային հարկի հաշվարկը ներկայացրել է ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ՝ 06.05.2021թ.-ին և հաշվարկից առաջացած վճարման ենթակա գումարը կազմել է ընդամենը 16.666 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ վարչական իրավախախտումը ունի նվազ նշանակություն, ուստի ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 21-րդ հոդվածով, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Դավիթ Բաղդյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Դավիթ Բաղդյանի վերաբերյալ հարուցված թիվ 23426 վարչական վարույթը կարճել:

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: